





Կենսաթոշակային ֆոնդերի ներդրումներն ու եկամտաբերությունը

4-րդ եռամսյակ, 2025

Երեք կուտակային կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների արժեքը կազմել է շուրջ 751 մլրդ ՀՀ դրամ 2025թ. դեկտեմբերի վերջի դրությամբ: Այդ միջոցները ներդրված են տարբեր ակտիվների դասերում՝ ստորև ներկայացված համամասնությամբ.




Ֆոնդերի միջոցները ներդրված են ՀՀ-ում և արտասահմանում, որոնք ներառում են ուղղակի և անուղղակի ներդրումներ՝ տարբեր պետությունների և բազմաթիվ ընկերությունների կողմից թողարկված արժեթղթերում:



Երեք կենսաթոշակային ֆոնդերը գրանցել են դրական եկամտաբերություն. ստեղծման պահից մինչև 4-րդ եռամսյակի ավարտը միջին տարեկան եկամտաբերությունը գտնվել է 7.5% - 8.2% միջակայքում:

Հաշվետու ժամանակաշրջանի և նախորդ տարիների եկամտաբերության ցուցանիշները ներկայացված են ստորև.


Ֆոնդ	Ստեղծման պահից միջին տարեկան	2025թ. 4-րդ եռամսյակ
Հավասարակշռված (AMBAL)	8.2%	3.6%
Պահպանողական (AMCON)	8.0%	3.6%
Կայուն եկամտային (AMFIX)	7.5%	3.2%



30.12.2025թ. դրությամբ
Եկամտաբերության ցուցանիշները ներառում են ֆոնդերի ակտիվների հաշվին կատարվող վճարները և ծախսերը: Եկամտաբերության նախկին ցուցանիշները չեն հանդիսանում հստակ կողմնորոշիչ ապագա եկամտաբերության համար:

Հավասարակշռված ֆոնդ (AMBAL)

2025թ. դեկտեմբերի վերջի դրությամբ Ամունդի-Ակբան Հավասարակշռված ֆոնդի ներդրումների շնորհիվ ապահովել է 3.0 մլրդ ՀՀ դրամ եկամուտ, որը կազմում է ֆոնդի զուտ ակտիվների 30.4%-ը:



- ❑ Հավասարակշռված ֆոնդի ակտիվների 36% կազմել են արտասահմանյան, իսկ 64%-ը՝ տեղական ներդրումները:
- ❑ Եռամսյակի արդյունքներով ֆոնդի եկամտաբերությունը կազմել է 3.6%:
- ❑ Արտասահմանյան ներդրումներն ապահովել են ընդհանուր եկամտաբերության 1.1 տոկոսային կետը, իսկ տեղական ներդրումները՝ 2.5 տոկոսային կետը:
- ❑ Արտարժույթը քիչ բացասական ազդեցություն է ունեցել եկամտաբերության վրա:


Ընդհանուր առմամբ՝ եռամսյակի ընթացքում թե՛ տեղական, թե՛ արտասահմանյան ակտիվներում կատարված ներդրումները ապահովել են բարձր արդյունավետություն:

Տվյալները ներկայացված են 2025թ. 4-րդ եռամսյակի՝ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների դրությամբ
Եկամտաբերության ցուցանիշները ներառում են ֆոնդերի ակտիվների հաշվին կատարվող վճարները և ծախսերը: Եկամտաբերության նախկին ցուցանիշները չեն հանդիսանում հստակ կողմնորոշիչ ապագա եկամտաբերության համար:

Պահպանողական ֆոնդ (AMCON)

2025թ. դեկտեմբերի վերջի դրությամբ Ամունդի-Ակբան Պահպանողական ֆոնդի զուտ ակտիվների արժեքը կազմել է 733.9 մլրդ ՀՀ դրամ, որի 26%-ը՝ 191.5 մլրդ ՀՀ դրամը, ֆոնդի ներդրումներից ձևավորված եկամուտն է:

մլրդ ՀՀ դրամ




- ❑ Պահպանողական ֆոնդի ակտիվների 34% կազմել են արտասահմանյան, իսկ 66%-ը՝ տեղական ներդրումները:
- ❑ Եռամսյակի արդյունքներով ֆոնդի եկամտաբերությունը կազմել է 3.6%:
- ❑ Արտասահմանյան ներդրումներն ապահովել են ընդհանուր եկամտաբերության 0.8 տոկոսային կետը, իսկ տեղական ներդրումները՝ 2.8 տոկոսային կետը:
- ❑ Արտարժույթը քիչ բացասական ազդեցություն են ունեցել եկամտաբերության վրա:

Ընդհանուր առմամբ՝ եռամսյակի ընթացքում թե՛ տեղական, թե՛ արտասահմանյան ակտիվներում կատարված ներդրումները ապահովել են բարձր արդյունավետություն:

Տվյալները ներկայացված են 2025թ. 4-րդ եռամսյակի՝ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների դրությամբ
Եկամտաբերության ցուցանիշները ներառում են ֆոնդերի ակտիվների հաշվին կատարվող վճարները և ծախսերը: Եկամտաբերության նախկին ցուցանիշները չեն հանդիսանում հստակ կողմնորոշիչ ապագա եկամտաբերության համար:

Կայուն եկամտային ֆոնդ (AMFIX)

2025թ. դեկտեմբերի վերջի դրությամբ Կայուն եկամտային ֆոնդի զուտ ակտիվների արժեքը կազմել է 6.8 մլրդ ՀՀ դրամ, որի 25%-ը՝ 1.7 մլրդ ՀՀ դրամը, ֆոնդի ներդրումներից ձևավորված եկամուտն է:



- ❑ Կայուն եկամտային ֆոնդի ակտիվների 26% կազմել են արտասահմանյան, իսկ 74%-ը՝ տեղական ներդրումները:
- ❑ Եռամսյակի արդյունքներով ֆոնդի եկամտաբերությունը կազմել է 3.2%:
- ❑ Արտասահմանյան ներդրումներն ապահովել են ընդհանուր եկամտաբերության 0.2 տոկոսային կետը, իսկ տեղական ներդրումները՝ 3.0 տոկոսային կետը:
- ❑ Արտարժույթը քիչ բացասական ազդեցություն է ունեցել եկամտաբերության վրա:

Ընդհանուր առմամբ՝ եռամսյակի ընթացքում եկամտաբերության վրա զգալի դրական ազդեցություն են ունեցել տեղական ակտիվներում կատարված ներդրումները:

Տվյալները ներկայացված են 2025թ. 4-րդ եռամսյակի՝ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների դրությամբ
Եկամտաբերության ցուցանիշները ներառում են ֆոնդերի ակտիվների հաշվին կատարվող վճարները և ծախսերը: Եկամտաբերության նախկին ցուցանիշները չեն հանդիսանում հստակ կողմնորոշիչ ապագա եկամտաբերության համար:

amundi-acba.am

Հեռ. 011 31 00 00

info-armenia@amundi.com



Իրավական ծանուցում

Սույն փաստաթուղթը նախատեսված է միայն տեղեկատվական նպատակների համար և չի ենթադրում և/կամ պարունակում որևէ խորհրդատվություն, առաջարկ, միջնորդություն՝ օգտվելու «ԱՄՈՒԼԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ի կամ վերջինիս հետ փոխկապակցված անձանց որևէ ծառայությունից: Փաստաթուղթը հիմնված է «ԱՄՈՒԼԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ի կողմից վստահելի համարվող աղբյուրների վրա: Մինչև որևէ կենսաթոշակային ֆոնդին միանալը բոլոր պոտենցիալ մասնակիցները պետք է գնահատեն իրենց ռիսկի հակվածության համապատասխանությունը եկամտաբերության իրենց ակնկալիքներին և պետք է ուսումնասիրեն յուրաքանչյուր ֆոնդի համար գործող իրավական ակտերը: Կենսաթոշակային ֆոնդի մասնակիցները ֆոնդի ընտրություն կատարելիս չպետք է հիմնվեն միայն սույն փաստաթղթի վրա: «ԱՄՈՒԼԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն չի կրում որևէ պատասխանատվություն, այդ թվում ուղղակի կամ անուղղակի, որը կարող է առաջանալ այս նյութում պարունակվող տեղեկատվության օգտագործման արդյունքում: «ԱՄՈՒԼԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն որևէ կերպ չի կարող պատասխանատու լինել տվյալ տեղեկատվության հիման վրա մասնակիցների կողմից ընդունված ներդրումային որոշումների համար: Ֆոնդերի նախկին եկամտաբերության ցուցանիշները չեն հանդիսանում վստահելի կողմնորոշիչ ընթացիկ կամ ապագա եկամտաբերության համար:

«ԱՄՈՒԼԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձ է, որը ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված թիվ 0002 ներդրումային ֆոնդի կառավարման լիցենզիայի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է կենսաթոշակային ֆոնդերի կառավարման գործունեություն:

Գրանցված գրասենյակը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10, տարածք 100-101 հասցեում:

«ԱՄՈՒԼԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

© «ԱՄՈՒԼԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ, 2026

Amundi acba

ASSET MANAGEMENT